

## ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԿԱՊԱՆՈՒՄ

Ապրիլի 27-ին ՀՀ Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը մարզկենտրոնում կատարել է քաղաքացիների ընդունելություն:

Ընդունելությանը ներկայացել է 57 քաղաքացի:

Դրամական օգնություն ստանալու խնդրանքով դիմել էր երեսունվեց, աշխատանքի տեղավորման՝ քսան, հողամասի սահմանների ճշտման մասին՝ մեկ քաղաքացի:

Դրամական օգնության դիմումներից երեսունչորսին տրվել է դրական լուծում, մեկը մերժվել է, մեկ դիմում գտնվում է ուսումնասիրման փուլում:

Ընթացք է տրվել աշխատանքի տեղավորման մասին հինգ դիմումի, տասնհինգ դիմումներ վերցվել են հաշվառման:

Աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումում ուսումնասիրման ընթացքի մեջ է գտնվում հողամասի սահմանների ճշտման մասին դիմումը:

ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմ